

7938

92.185

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԵԿԵԼԵՅԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

Ս. ՆՇԱՆ ԵԿԵԼԵՅԻՈՅ



ՀԻՄՆՈՒՄԻ 1927-ԻՆ

ՊԵՅԻՐՈՒԹ

281.6

2.24

281.6

7938

2-24

04 NOV 2009

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԱՆԹԻԼԻԱՍ-ԼԻԲԱՆԱՆ

1934 Փետր. 5

Պ Ո Չ

ՊԵՐՈՒԹԻ

ՄԵՐ ՕՐՀՆԵՍԱԼ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ

Հայ եկեղեցատեր Տիկիցներու Միութիւնը, կազմակերպուած 1927-ին, այժմ բեւառիւթաձ է իր եօրներուդ տարին:

Աւելի պատշաճ պիտի ըլլար *Եկեղեցաշէն* տիտղոսը տալ Պերութի Հայ Տիկիցներու այս Միութեան, որովհետեւ անոնք այս եօրը տարիններու ընթացքին չորս հազար սիրիական քղրոսկոյ զումար մը գոյացուցին, ի նպաստ Ս. Նշան եկեղեցոյ շինութեան:

Ճարտարապետին ճնշութեամբ հաստատուեցաւ որ կարելի չէ Ս. Նշանի հիմնական շէնքը ունէ կերպով յարմարցնել այսօրուան պէտքերուն. հետեւաբար որոշուած է այդ հիմին տեղ նոր եկեղեցի մը կառուցանել հայացի ոճով, կարելի եղածին չափ ժախճով, առանց անտեսելու շէնքին ընդարձակութիւնը եւ վայելչութիւնը:

Գագիկ Բագրատունիի Տիկիներ Կատարովիք բազմունիք իրեն, չազրը Սմբատ Բագրատունիէն Անիի մէջ հիմնադրուած Կարողիկէն շինեց եւ ի գլուխ հանեց «ամենապայծառ վայելչութեամբ» 993-ին:

1 JUN 2013

Պերուքի եկեղեցաւէն Տիկիմներ, ամենքն ալ Հայ ժողովուրդի սպանդէն պախաւոր Կադրաւորներ, վոսան ենք որ Նոր Ս. Նշանը պիտի բարձրացնեն ձիւնին տակ մեր օրհնեալ ժողովրդեան քաջալերութեամբը, իբրեւ կոթող իրենց միաշունչ սիրոյն, ջերմ կորովին եւ հաստատ հաւատքով:


Հայոց համար մայր է իրենց Ս. եկեղեցին եւ հայր՝ Ս. Աւետարանը: Եւ անա՛ Հայ Մայրեր են որ Պերուքի մէջ կը միացնեն իրենց սէրն ու աշխատանքը, եւ կը դիմեն ճշգի, սիրելի ժողովուրդ, որպէս զի արտաբնական տարբերակներով օժանդակեալ իրենց ծրագրին զորձադրութեան:

Կոչ կ'ընենք Լիբանանու Հայութեան եւ հաւասարեալ հոգիներու որ օգնեն Պերուքի եկեղեցւոյն շինութեան իրենց կարողութեան չափով:

Կ'օրհնենք եկեղեցաւէն Տիկիմանց ջանքերն ու արդիւնքները:

Այս կոչին հետ մեր հայրական ողջոյններն ալ կ'ուղղենք մեր օրհնեալ ժողովրդեան եւ կը մաղթենք յաջողութիւն բոլորին, եւ կ'աղօթենք որ մեր Մայրենի եկեղեցին պայծառամայ ամենուրեք իրեն հաւատարիմ զօրակներու գիտակցութեան լուսով եւ հաւատքով մեծապայծառ ջանով:

Աղօթարար



ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԼԵՐ ՏԻԿԻՄԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

Ա. ԱՆՈՒՆ

ՅՈՂՈՒԱԾ 1.

Միութեանս անունն է՝ «Հայ եկեղեցաւոր Տիկիմանց Միութիւն Պերուքի Ս. Նշան եկեղեցւոյ»:

Բ. ՆՊԱՏԱԿ

ՅՈՂՈՒԱԾ 2.

Միութեանս հիմնական նպատակն է.

(ա) Հայ ընտանիքին մէջ քրիստոնէական սուրբ հաւատքը վառ պահել:

(բ) Հայաստանեայց Ս. եկեղեցւոյ հանդէպ մշակել եւ զարգացնել սիրոյ եւ ծառայութեան սրբի:

(գ) Հայ ընտանիքին մէջ կրօնական եւ ազգային սրբութեանց եւ աւանդութեանց անաղարտ պահպանումին ստատարել:

(դ) Օժտանդակել Ս. Նշան եկեղեցւոյ պայծառութեան եւ բարեխառութեան:

Գ. ՄԻՋՈՑՆԵՐ

ՅՈՂՈՒԱԾ 3.



Միութեանս իր նպատակին իրագործման համար կը կիրարկէ հետեւեալ միջոցները:—

65621-67

(ա) վերաշինել կամ ընդարձակել Ս. Նշան եկեղեցւոյ արդի շէնքը աւելի վայելուչ և նպատակայարմար ձևով:

(բ) Հրատարակել և տարածել կրօնաբարոյական և եկեղեցագիտական բովանդակութեամբ գրքեր:

(գ) կազմակերպել լսարաններ և դասախօսութիւններ կրօնական, եկեղեցական, բարոյական, ընտանեկան և պատմական նիւթերու շուրջ:

(դ) Օժանդակել կանոնաւոր Դպրոց Դասի մը կազմութեան, այդու աւելի ևս հաճելի և սիրելի  աշխուհամար Հայաստանեայց Ս. եկեղեցի  մեծախորհուրդ պաշտամունքը հաւատացեալ հոգիներուն:

Դ. ԱՆԳԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾ 4.

Միութեանս կրնան անդամակցիլ Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցւոյ պաւակ բոլոր անդամներ և չափահաս օրիորդներ, պայմանաւ որ ընդունին և գործադրեն ներկայ կանոնագրին տրամադրութիւնները:

ՅՕԴՈՒԱԾ 5.

Անդամները երկու կարգի կը բաժնուին.

(ա) Գործօն անդամներ:

(բ) Պատույ անդամներ:

ՅՕԴՈՒԱԾ 6.

Գործօն անդամ են անոնք որ կանոնաւոր կերպով կը կատարեն իրենց անդամական պարտաւորութիւնները (բարոյական թէ նիւթական) հանդէպ Միութեանս:

ՅՕԴՈՒԱԾ 7.

Պատույ անդամ կը նկատուին անոնք որ Միութեանս կը մատուցանեն բարոյական նշանակելի ծառայութիւններ և կամ անոր ղանձին կը նուիրեն առնուազն յիսուն սիւրիական ոսկի միանուագ գումար մը:

ՅՕԴՈՒԱԾ 8.

Միութեանս պատույ անդամ կրնան ըլլալ ոչ միայն իր գործօն անդամները, այլ նաեւ բոլոր եկեղեցաւէր և բարեւէր երկսեռ ազգայիններ, որ անդամ չըլլալով հանդերձ կը լրացնեն կանոնագրին 7րդ յօդուածին տրամադրութիւնները:

ՅՕԴՈՒԱԾ 9.

Պատույ անդամութեան տիպոսը, ինչպէս նաեւ վկայագիրը, կուտայ Միութեանս վարչական ժողովը, Սրբազան Նախագահին ներկայութեամբ գումարուած նիստի մը մէջ:

Հ. Բ. Ը. Միութեան պատուանիշներուն պէս պատուանիշ հաստատել:

Ե. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

307ՈՒԱԾ 10.

Միութիւնս կը գործէ զուտ կրօնական և ազգային գետնի վրայ և ենթակայ է Լիբանանի թեմին ազգային իշխանութեան:

307ՈՒԱԾ 11.

Միութիւնս ունի հետեւեալ վարչական կազմը.

(ա) Նախագահութիւն:

(բ) Անդամական Ընդհանուր ժողով:

(գ) Վարչական ժողով:

307ՈՒԱԾ 12.

Միութեանս Նախագահն է Լիբանանի թեմին Սրբազան Առաջնորդը:

307ՈՒԱԾ 13.

Անդամական Ընդհանուր ժողովը կը բաղկանայ Միութեանս անդամակցող և իրենց բարոյական թէ նիւթական յանձնառութիւնները լիովին կատարող քսան տարեկանէն վեր բոլոր անդամներէն:

307ՈՒԱԾ 14.

Անդամական Ընդհանուր ժողովը կը գումարուի տարին անգամ մը, Մարտ ամսուան մէջ, Վարչական ժողովին հրաւերով, և նախագահութեամբ Սրբազան Առաջնորդին: Ա-

ռաջին հրաւերով գումարուած ժողովը օրինաւոր կը նկատուի եթէ վճարող անդամներուն կէսէն մէկ աւելին ներկայ է: Հակառակ պարագային երկրորդ հրաւերով մը տասնը հինգ օր յետոյ կրկին կը գումարուի և այն ատեն ինչ որ ալ ըլլայ ներկաներուն թիւը, ժողովը օրինաւոր կը նկատուի և կը սկսի իր աշխատանքին, ընտրելով իր ղեկավարը:

307ՈՒԱԾ 15.

Անդամական Ընդհանուր ժողովին պարտականութիւնն է.

(ա) Առնել Վարչական ժողովին բարոյական թէ նիւթական գործունէութեան տարեկան համարատուութիւնը:

(բ) Դադոնի քուէարկութեամբ մէկ տարուան համար ընտրել Վարչական ժողովը, առ առաւելն եօթը հոգիէ բաղկացեալ:

(գ) Նշանակել քննիչ մարմին մը՝ քննելու համար Վարչական ժողովին ներկայացուցած համարատուութիւնը:

(դ) Պատրաստել Վարչական ժողովին յառաջիկայ տարեշրջանի գործունէութեան ծրագիրը:

307ՈՒԱԾ 16.

Վարչական ժողովը Միութեանս գործադիր իշխանութիւնն է: Կ'ընտրուի Ընդհանուր

Անդամական ժողովէն՝ մէկ տարուան համար համարատու է անոր և վերընտրելի է: Իր պաշտօնն է գործադրել կանոնագրին տրամադրութիւնները:

30701ԱԾ 17.

Վարչական ժողովը կը կազմէ իր ղեկանը հետեւեալ կերպով:— Ատենապետ, փոխ Ատենապետ, Ատենադպիր, փոխ Ատենադպիր և Դանձապահ:

Առնուազն երկու շաբաթն անգամ մը կանոնաւոր կերպով կը գումարէ իր նիստերը, նախընտրապէս Աղգային Առաջնորդարանին մէջ, նախագահութեամբ Սրբազան Առաջնորդին:

Ատենապետին պարտականութիւնն է կանոնաւոր կերպով նիստի հրաւիրել ժողովը, վարել զայն, և հսկել որ տրուած որոշումները լիովն լինին և կանոնաւորութեամբ գործադրուին: Ատենապետին բացակայութեան, փոխ Ատենապետին վրայ կը ծանրանայ այս պարտականութիւնը:

Ատենադպիր պաշտօնն է տոմարի մը մէջ ճշգրիտ կերպով արձանագրել ժողովներու ընթացքին կատարուած խորհրդակցութիւնները և տրուած որոշումները, կատարել թվթակցութիւնները՝ պահելով անոնց օրի-

նակը, և կանոնաւոր կերպով դատաւորել ստացուած նամակները և ամէն տեսակ գրութիւնները: Ատենադպիրն բացակայութեան փոխ Ատենադպիրն կ'լինայ այս պարտականութեանց կատարումը: Միութեանս կնիքը կը մնայ Ատենադպիրին քով:

Միութեանս զրամական գործառնութեանց մէջ Դանձապահը պատասխանատու է Վարչական ժողովին: Ան պէտք է բռնէ երեք կանոնաւոր տոմար. առաջինը անդամներուն արձանագրութեանց յատուկ, երկրորդը անտուկին հաշիւներուն համար, և երրորդը զրամատան հաշիւներուն արձանագրութեան: Արձանագրութեանց տոմարին մէջ, թուահամարի կարգով պէտք է արձանագրել անդամներուն անուն—մականունը, անդամագրութեան թուականը, վճարած մուծքի տուրքը, և յանձն առած ամսավճարը կամ տարեվճարը:

Մնտուկի տեսրակին մէջ օրը օրին և կանոնաւոր կերպով պէտք է արձանագրել պաշտօնական ընկալագրով դանձուած զբաւմունքը և փոխան ընկալագրի եղած ծախքերը: Առանց ընկալագրի ոչ մէկ դանձում կամ վճարում պէտք է ընել: Առձեռն ծախքերու համար դանձապահը կրնայ մինչև քրտան սիւրբական ոսկի պահել անտուկին մէջ:

Անկէ վեր ամէն գումար պէտք է յանձնուի զբամաստան, Միութեանն հաշուոյն: Դրամատան հաշուէն յատկացուած տոմարին մէջ կանոնաւոր կերպով պէտք է արձանագրել ի պահ զրուած գումարները, ինչպէս նաև չէքով կամ ընկալագրով ետ առնուածները և տոկոսի հաշիւները:

Գանձապահը պարտաւոր է երեք ամիսն անգամ մը ժողովին ներկայացնել զբաւոր համարատուութիւն մը:

30ԴՈՒԱԾ 18.

Վարչական ժողովը կրնայ ի հարկին կազմել երեք կամ չինգ հոգիէ բաղկացեալ օժանդակ մարմիններ, և անոնց միջոցաւ կատարել անդամագրութիւնները, նուիրահաւաքումները, կազմակերպել լսարաններ և հոգ տանիլ Եկեղեցւոյ բարեգարգութեան, և այլն:

Զ. ՀԱՍՈՅԹՆԵՐ

30ԴՈՒԱԾ 19.

Միութեանն հասոյթի աղբիւրներն են.— մուտքի տուրքեր, անդամավճարներ, բացառիկ նուէրներ, տօնական օրերու պնակի հասոյթներ, պսակի և մկրտութեան առթիւ վարձու տրուած մոմագիրներ, հանդէսներէ և երեկոյթներէ գոյացած գումարներ, և այլն:

30ԴՈՒԱԾ 20.

Դոյացած հասոյթներէն վարչական և փրօփականաւոր համար եղած ծախքերը զեղչելէ վերջ մնացեալ գումարը Միութեանն անունով ի պահ կը զրուի քաղաքիս աղահոյ գրամատուներէն մէկուն մէջ:

30ԴՈՒԱԾ 21.

Առանց նախապահին, Ատենապետին և Գանձապահին հաւաքական ստորագրութեան, կարելի չէ զբամատուէն Միութեանն հաշուոյն ունէ գումար ետ առնել:

30ԴՈՒԱԾ 22.

Վարչական, ինչպէս նաև բոլոր փրօփականաւոր ծախքերը, նախապէս կ'որոշուին վարչութեան կողմէ: Գանձապահը նախապահի և Ատենապետին գրաւոր արտօնութեամբ միայն կը կատարէ որոշուած ծախքերը կամ կ'ընէ վճարումները:

Է. ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

30ԴՈՒԱԾ 23.

Միութեանն ներկայ կանոնադրին անունէն, նպատակէն, ինչպէս նաև երրորդ յօդուածին առաջին արամադրութենէն զատ, միւս բոլոր յօդուածները կրնան բարեփո-

խուրի Անդամական Ընդհանուր Ժողովին կողմէ, և Ազգային Իշխանութեան վաւերացումով:

Ը. ԼՈՒԾՈՒՄ

307ՈՒԱԾ 24.

Այն պարագային երբ Միութեան անդամներուն թիւը տասէն պակասի իջնայ, լուծուած կը համարուի, և իր ունեցած գոյքն ու զրամը փոխան ընկալադրի կը յանձնուի Ազգային Իշխանութեան, պայմանաւ որ ան գործածուի այս կանոնադրին երկրորդ և երրորդ յօդուածներով նախատեսուած նպատակին:

ՎԱԻԵՐԱՑՈՒԱԾ Քաղաք. Ժողովի ԽՁ.դդ եւ 19
Նոյեմբեր 1933 քուակիր Եիսիկն որոշմամբ:

ԿԱԹ. ՓՈԽ. ԵՒ ՆԱԽ. ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ
ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՍ. ԿԱՐՕԵԱՆ



ՀՀ Ազգային գրադարան



NL0165790

88

ՏՄ. ԴՊՐԵՎԱՆՈՒՑ - ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԿԵԼԻԿԻՈՅ
ԱՆԹԻԼԻԱՍ - ԼԻԲԱՆԱՆ

